ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» դեկտեմբերի 2022 թվականի N **554**

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0258-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի բնակիչ Խալաթ Շիրինյանի ներկայացուցիչ Արթուր Սարգսյանի 01.12.2022թ. թիվ Ս-1000 դիմումը, ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 08.11.2022թ. վճիռը, «Արսեն Իսահակյան Ռուբիկի» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել Ստեփանավան համայնքի ք. Ստեփանավան 06-007-0258-0001 ծածկագրում գտնվող 605.44 քմ բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Ստեփանավան համայնքի 06-007-0258-0001 ծածկագրի հողամասի մակերեսը 605.44 քմ

   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 605.44 քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Խալաթ Մուխայելի Շիրինյանին և մինչև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:
3. Ստեփանավան համայնքի ք. Ստեփանավան 06-007-0258-0001 ծածկագրի հողամասի վրա, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 202.36 քմ մակերեսով բնակելի տան, 27.51 քմ մակերեսով բաց պատշգամբի, 13.43 քմ մակերեսով հավանոցի, 19.84 քմ մակերեսով

անասնաշենքի, 25.56 քմ բաց ծածկի, 15.69 քմ մակերեսով պարիսպների նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել՝ Խալաթ Մուխայելի Շիրինյանին սեփականության իրավունքը:

4. Վերը նշված անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան, Վ.Մայակովսկու փողոց թիվ 13 բնակելի տուն:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» դեկտեմբերի 2022 թվականի N **555**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 06-007-0061-0024 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 22 ՀԱՍՑԵՅԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աիդա Սարգսի Կիրակոսյանի ծնված 28.08.1963թ. (նույնականացման քարտ՝ 002234011, տրված 02.04.2014թ. 053-ի կողմից) կողմից ներկայացված դիմումը, 20.07.2022թ. թիվ Ստ-480 արխիվային քաղվածքը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել Ստեփանավան համայնքի ք.Ստեփանավան 06-007-0061-0024 ծածկագրում գտնվող 614.6 քմ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Ստեփանավան քաղաքի 06-007-0061-0024 ծածկագրի հողամասի մակերեսը 614.6 քմ

   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 614.6 քմ մակերեսով հողամասից 600.0 քմ օրինական հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Աիդա Սարգսի Կիրակոսյանին, իսկ մինչև 15.05.2001թ. զբաղեցրած և առ այսօր օգտագործվող առանց իրավունք հաստատող փաստաթղթերի 14.6 քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով հատկացնել՝ Աիդա Սարգսի Կիրակոսյանին և մինչև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված նկուղի, բնակելի տան և մանսարդի նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. Ստեփանավան քաղաքի 06-007-0061-0024 ծածկագրի հողամասի վրա, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 14.73 քմ ներքին մակերեսով նկուղի, 98.34 քմ ներքին մակերեսով բնակելի տան, 2.40 քմ մակերեսով աստիճանավանդակի, 44.69 քմ նեքին մակերեսով մանսարդի և 8.5 քմ բաց պատշգամբի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել՝ Աիդա Սարգսի Կիրակոսյանի սեփականության իրավունքը:
4. Վերը նշված՝ նախկին ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Անտառային փողոց 2-րդ նրբանցք թիվ 22 փոստային հասցեով անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան Անտառային փողոց 2-րդ նրբանցք թիվ 22 բնակելի տուն:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» դեկտեմբերի 2022 թվականի N **556**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0211-0013 ԾԱԾԿԱԳՐԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ 29 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ , ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Պարգևի Խարազյանի կողմից ներկայացված 29.11.2022թ. թիվ Խ-991 դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Անդրանիկի փողոց 29 հասցեում ինքնակամ կառույցված բնակելի տունը օրինականացնելու խնդրանքը, 21.10.2005թ. N 1205827 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման վկայականը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով հաստատված 25.11.2022թ. թիվ 2022TJJKM9 ծածկագրով տրամադրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը և 10.07.2022թ.կազմված ինքնակամ կառույցի հաշվառման փաթեթի վերաբերյալ համաձայնությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունը կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ճշտել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ք. Ստեփանավան Անդրանիկի փողոց 29 հասցեի հողամասի սահմանային չափերը և մակերեսը համաձայն «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի, որի մակերեսը կազմում է 0.0504հա, նախկինում թիվ 1205827 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման վկայականի պետական գրանցում ստացած 0.05 հա մակերեսի փոխարեն:
2. Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան Անդրանիկի փողոց 29 հասցեի, Սամվել Պարգևի Խարազյանին սեփականության իրավունքով պատկանող 06-007-0211-0013 կադաստրային ծածկագրերի տակ գտնվող 0.0504 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 35.74 քմ ներքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկը և 34.09քմ բնակելի տան 2-րդ հարկը:

3. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 35.74 քմ ներքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի համար 70372 /յոթանասուն հազար երեք հարյուր յոթանասուներկու / ՀՀ դրամ, 34.09 քմ ներքին մակերեսով բնակելի տան 2-րդ հարկ համար 67124 /վաթսունյոթ հազար հարյուր քսանչորս / ՀՀ դրամ: Ընդամենը վճարվելիք գումարը կազմում է 137496 / հարյուր ութսուներկու հազար երեսունվեց/ ՀՀ դրամ:
   Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար նախատեսված գումարը, վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255001712 հաշվեհամարին:
4. Վերը նշված՝ նախկին ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան Անդրանիկի փողոց 29 փոստային հասցեով անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան Զորավար Անդրանիկի փողոց, 29 բնակելի տուն:
5. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» դեկտեմբերի 2022 թվականի N **557**

«ՍԵՐՅՈԺԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ստեփանավան համայնքի վարչական տարածքում «Սերյոժա Հովասափյան» անհատ ձեռնարկատերը 2022 թվականի դեկտեմբերի 14-ին հայտ է ներկայացրել համայնքապետարան իր ձեռնարկատիրական օբյեկտում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն ստանալու համար:

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 08.04.2022թ. «Ստեփանավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» թիվ 29-Ն որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի Բաղրամյան փողոց թիվ 111/2 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Սերյոժա Հովասափյանի հայտը բավարարել և նրան տալ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 01.12.2022-31.12.2022թթ. ժամանակահատվածի համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Ղալաչյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարաել համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին տուրքերի գանձումները կատարել յուրաքանչյուր ամսվա համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» դեկտեմբերի 2022 թվականի N **558**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 29.12.2021թ. N 09-Ն որոշման 5-րդ կետը՝ ***որոշում եմ.***

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 09-Ն որոշմամբ հաստատված Ստեփանավան համայնքի 2022 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Ստեփանավան համայնքի 2022 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» ծրագրի նախահաշվի (բաժին 1 խումբ 1 դաս 1)
   հոդված «4241-Մասնագիտական ծառայություններ» պակասեցնել 380.0 հազ.դրամով՝ սահմանելով 4390.0հազ.դրամ
2. Ստեփանավան համայնքի 2022 թվականի բյուջեի «Գրադարաններ» ծրագրի նախահաշվի (բաժին 08 խումբ 2 դաս 1)
   Հոդված «5113–Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում»՝ պակասեցնել 790.0 հազ.դրամով,սահմանել 96984.725 հազ.դրամ
   Հոդված «5134-Նախագծահետազոտական ծախսեր»՝ ավելացնել 790.0 հազ.դրամով, սահմանել 2783.04 հազ.դրամ:
3. Ստեփանավան համայնքի 2022 թվականի բյուջեի «Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ,արհմիություններ» ծրագրի նախահաշվի (բաժին 08 խումբ 4 դաս 2)
   Հոդված «4819-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին»՝ ավելացնել 180.0 հազ.դրամով՝ սահմանելով 230.0հազ.դրամ:
4. Ստեփանավան համայնքի 2022 թվականի բյուջեի «Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրի նախահաշվի (բաժին 10 խումբ 7 դաս 1) «4729 – այլ նպաստներ բյուջեից » ծախսային հոդվածը ավելացնել 200.0 հազ. դրամով, սահմանել 3700.0հազ.դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» դեկտեմբերի 2022 թվականի N **559**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 36/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՆՇՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԵՐՍՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի Սունդուկյան փողոց թիվ 36/1 հասցեի սեփականատեր Գագիկ Արամի Մարգարյանի կողմից ներկայացված դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Սունդուկյան փողոց թիվ 36/1 հասցեում ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու խնդրանքը, 09.07.2021թ. N 09072021-06-0016 անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված՝ 23.11.2022թ. ինքնակամ կառույցի հաշվառման փաթեթի վերաբերյալ համաձայնությունը և 14.12.2022թ. թիվ 2022PYYKAL ծածկագրով հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով և 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ և ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 13-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել ք.Ստեփանավան Սունդուկյան փողոց թիվ 36/1 հասցեի 06-007-0028-0017 կադաստրային ծածկագրում գտնվող հողամասի սահմանները համաձայն «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագիծի:
2. Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ք.Ստեփանավան Սունդուկյան փողոց թիվ 36/1 հասցեի, Գագիկ Արամի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող 06-007-0028-0017 կադաստրային ծածկագրում գտնվող 0.045 հա մակերեսով հողամասում 2019թ. ինքնակամ կառուցված՝ 10.7 քմ ներքին մակերեսով ամառային խոհանոցը, 23.3 քմ ներքին մակերեսով զրուցարանը, 10.7 քմ ներքին մակերեսով ցախանոցը,

28.9 քմ ներքին մակերեսով խանութը, 9.3 քմ ընդհանուր մակերեսով պարիսպները և բնակելի տան արտաքին պատի վրա պատուհանի ձևափոխումը:

3. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 10.7 քմ ներքին մակերեսով ամառային խոհանոցի համար 17902.0 /տասնյոթ հազար ինը հարյուր երկու/ ՀՀ դրամ, 23.3 քմ ներքին մակերեսով զրուցարանի համար 38981.0 /երեսունութ հազար ինը հարյուր ութսունմեկ/ ՀՀ դրամ, 10.7 քմ ներքին մակերեսով ցախանոցի համար 17902.0 /տասնյոթ հազար ինը հարյուր երկու/ ՀՀ դրամ, 28.9 քմ ներքին մակերեսով խանութի համար 96700.0 /իննսունվեց հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ, 9.3 քմ ընդհանուր մակերեսով պարիսպների համար 15559.0 /տասնհինգ հազար հինգ հարյուր հիսունինը/ ՀՀ դրամ, և թվով մեկ հատ պատուհանի ձևափոխման համար 1673.0 /մեկ հազար վեց հարյուր յոթանասուներեք/ ՀՀ դրամ:
4. Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար սահմանված ընդհանուր վճարը կազմում է 188717.0 /մեկ հարյուր ութսունութ հազար յոթ հարյուր տասնյոթ/ ՀՀ դրամ, որը վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255001407 հաշվեհամարին:
5. Օրինական ճանաչել բնակելի տան ներսում կատարված բոլոր միջնորմերի փոփոխությունները, քանի որ դրանք կատարվել են առանց հիմնական կրող /արտաքին/ պատերի ձևափոխության:
6. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
7. Համաձայն 09.07.2021թ. N 09072021-06-0016 անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը թիվ 4 ավտոտնակը և թիվ 5 սանհանգույցը քանդվել են, շինարարական և բակի բարեկարգման աշխատանքների ժամանակ, քանի որ վերը նշված շինությունները գտնվել են կիսաքանդ և շահագործմանը ոչ պիտանի վիճակում:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» դեկտեմբերի 2022 թվականի N **560**

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ՄԱՅԱԿՈՎՍԿԻ 13 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալեքսանդր Արամի Պողոսյանի կողմից ներկայացված 12.12.2022թ. թիվ Պ-1019 դիմումը, 17.08.2011թ. թիվ 2502831 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Լոռու մարզ ք. Ստեփանավան, Մայակովսկի 13 փոստային հասցեով՝ բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և հողամասում առկա բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան ք. Ստեփանավան, Վ. Մայակովսկու փողոց, 2-րդ փակուղի, 13 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» դեկտեմբերի 2022 թվականի N **561**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 48 ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՈՎ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ասյա Ռոլանդի Սուղյանի կողմից ներկայացված 19.12.2022թ. թիվ Ս-1036 դիմումը, 30.08.2012թ. թիվ 12122022-06-0073, 11.10.2006թ. թիվ 12122022-06-0072 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները, նոտարական ակտի կոդ 863-20221206-2-6506894 և 863-20221206-2-6506911 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրերը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան ք. Ստեփանավան Գ. Սունդուկյան փողոց թիվ 48 փոստային հասցեով՝ բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տան և օժանդակ շինությունների փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Գ. Սունդուկյան փողոց թիվ 48:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» դեկտեմբերի 2022 թվականի N **562**

ՍՊԱՐՏԱԿ ՄԱԼԵՐՅԱՆԻՑ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2022 թվականաի նոյեմբերի 23-ի դրությամբ քաղաքացի Սպարտակ Մալերյանի աղբահանության դիմաց պարտավորությունները Ստեփանավան համայնքի բյուջեի նկատմամբ կազմում է՝ 55229 /հիսունհինգ հազար երկու հարյուր քսանինը/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 43100 /քառասուներեք հազար հարյուր/ ՀՀ դրամ, տույժ՝ 12129 /տասներկու հազար հարյուր քսանինը/ ՀՀ դրամ: Նշված գումարը առաջացել է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 18-րդ հոդվածների, 20-րդ հոդվածի 2-րդ մասով, Ստեփանավան համայնքի ավագանու 29.12.2021 թվականի թիվ 11-Ն որոշմամբ սահմանված աղբահանության դիմաց պարտավորությունները չկատարելու պատճառով և տվյալ գումարը ենթակա է գանձման:

Վերոգրյալի կապակցությամբ 2022 թվականի նոյեմբերի 23-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի համաձայն՝ Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ աղբահանության դիմաց վճարման ենթակա գումարը գանձելու նպատակով:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 2022 թվականի դեկտեմբերի 6-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Սպարտակ Մալերյանը: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 6-րդ, 14-րդ, 18-րդ հոդվածները, 19-րդ հոդվածի 5-րդ մասը, 20-րդ հոդվածի 2-րդ մասը, 21-րդ հոդվածը, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, Ստեփանավան համայնքի ավագանու 29.12.2021 թվականի թիվ 11-Ն որոշումը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 59-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Սպարտակ Մալերյանից հօգուտ Ստեփանավան համայնքի բյուջե գանձել՝ 55229 /հիսունհինգ հազար երկու հարյուր քսանինը/ ՀՀ դրամ, որպես աղբահանության դիմաց սահմանված տեղական վճարի գումար:

2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ստեփանավան համայնքի ղեկավարին կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթ մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը _____

(ստորագրություն հարկ (տուգանք) վճարողի անուն, ազգանուն, ամսաթիվը)

Նշում որոշումն իրազեկելու այլ միջոցների մասին _____

(իրազեկման եղանակ, ամսաթիվ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetarab@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» դեկտեմբերի 2022 թվականի N **563**

Ա/Ձ ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով առևտրի և ծառայությունների ոլորտի վերահսկողության հանձնաժողովի կողմից առևտրի ոլորտում իրականացված հսկողության արդյունքում կազմած նյութերը պարզեցի, որ 21.12.2022թ. տրված հանձնարարագրով նույն օրը Ա/Ձ Աննա Դանիելյանին պատկանող քաղաք Ստեփանավան, Բաղրամյան փողոց, թիվ 22 հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում կատարվել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի կիրառման ճշտության ուսումնասիրություն: Ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ Ա/Ձ Աննա Դանիելյանը քաղաք Ստեփանավան, Բաղրամյան փողոց, թիվ 22 հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում կատարում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված զանցանք, այն է՝ առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպումը և իրացումը:

Նշված փաստի առթիվ կազմվել է արձանագրություն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասի հատկանիշներով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով 21.12.2022 թվականին կազմված թիվ 1 արձանագրությունը, ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասով, 219.1-րդ, 281-րդ, 282-րդ, 305-րդ հոդվածներով, «Վարչարաության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ. կետով, 58-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 26-րդ կետերով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ա/Ձ Աննա Դանիելյանին ենթարկել վարչական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով նախատեսված զանցանքը կատարելու համար և նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ՀՀ ֆինասների նախարարության գործառնական վարչության Ստեփանավանի համայնքապետարանի 900255101140 հաշվարկային հաշվին:

3. Սույն որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից կարող է վարչական կարգով բողոքարկվել Ստեփանավանի համայնքի ղեկավարին կամ դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելու օրվան հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**